Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Սյուզաննա Նազարյանի 2022-2023 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքների տարեկան

Հաշվետվություն

2022-2023 ուստարվա ընթացքում կատարվել են ուսումնադաստիարակչական և կազմակերպչական հետևյալ աշխատանքները.

Տարվա ընթացքում պատշաճ կերպով իրականացվել են բոլոր աշխատանքները ի շահ մեր աշակերտների:

Տարվա ընթացքում գումարվել են 12 մանկավարժական խորհրդի նիստ և ըստ ժամանակացույցի կառավարման խորհրդի նիստեր:

Նշանակվել են մեթոդմիավորման նախագահներ,դասղեկներ,կաբինետների պատասխանատուներ:

1.Կազմակերպվել է դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացը՝
- Հիմնվելով 2022-2023 ուստարվա օրինակելի ուսումնական պլանի և կանոնադրության վրա ՝ տեղծվել է դպրոցի ուսումնական պլանը, և կազմվել են անհրաժեշտ բոլոր գրաֆիկները /ուսումնական պլան, դպրոցական բաղադրիչ ժամաքանակի բաշխում, ուսուցիչների ժամաբաշխում/: Բաշխվել է դպրոցական բաղադրիչ ժամաքանակը, դպրոցական բաղադրիչ ժամաքանակն արտացոլող գրաֆիկում նշվել են այն դասարանները, որոնցում կազմակեպվել է ռուսերենի խորացված ուսուցում՝ 5-րդ<<ա>>, 5-րդ <<բ>> և 9-րդ <<ա >>, 9-րդ <<բ>> դասարաններում:

-ժամանակին կազմվել է 2022-2023 ուստարվա դասացուցակը: Դասացուցակը լիովին համապատասխանել է դպրոցի ուսումնական պլանին և հաշվի է առնվել դասաժամերի օպտիմալ հարաբերակցությունը, ինչպես նաև օրվա և շաբաթվա ընթացքում ուսումնական առարկաների ճիշտ հաջորդականությունը: Դասացուցակը կազմված է եղել այնպես, որ հնարավոր է եղել կատարել փոփոխություններ՝ ուսուցիչների բացակայությունների հետ կապված: :

Մշտապես վերահսկվել է Emis.am էլեկտրոնային մատյանի աշխատանքները, վեր հանվել թերությունները և կատարվել անհրաժեշտ փոփոխությունները:

Կատարվել է դասագրքերի բաշխում և զեղչի հատկացում,դասղեկները ներկայացրել են դասղեկական աշխատանքների պլանները հաստատման,կազմվել է ծնողական ժողովների գրաֆիկներ:Կատարվել են դասարանների թեմատիկ ձևավորում:

Աշխատանքներ են տարվել անցանկալի վարք դրսևորող աշակերտների,հատուկ կարիքներով և սոցիալապես անբարենպաստ պայմաններում գտնվող ընտանիքների երեխաների հետ:

Ուստարվա ընթացքում ստուգվել և աշխատանքներ են տարվել աշակերտների գրադարանի հաճախելիության, մոտիվացիայի բարձրացման ուղղությամբ:Համագործակցում ենք <<Զարթնիր>>ՀԿ-ի հետ:

-Աշխատելով վարձաչափային /տարիֆիկացիոն/ հանձնաժողովի կազմում՝հաշվվել ու համակարգվել են ուսուցիչների դասաժամերը /սեպտեմբերի սկզբին և հունվարի սկզբին/: Ուստարվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում, լրացվել է ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի մատյանը, որի հիման վրա յուրաքանչյուր ամսվա վերջում կազմվել է աշխատավարձի տաբել և ներկայացվել տնօրենի հաստատմանը:

.

2. Ուսումնական ծրագրերի կատարում.

Ուսումնական ծրագրերի կատարման ստուգումն իրականացրել են մեթոդմիավորումների նախագահները՝հաշվի առնելով յուրաքանչյուր դասարանում յուրաքանչյուր առարկայի ծրագրի կատարողականը, հաշվառելով էլեկտրոնային մատյանի և թեմատիկ պլանների դասաժամերը: Մեթոդմիավորումների նախագահները այդ մասին հաշվետվություն են ներկայացրել դպրոցի մանկխորհրդին: Դպրոցի կիսվող և չկիսվող դասարանների բոլոր առարկաների ծրագրերը կատարվել են:

3. ***<u>Դասավանդման որակի և սովորողների՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների՝ չափորոշիչներով սահմանված առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովումը.</u>***

Դասավանդման որակի և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների՝ ՀՊՉ-ով սահմանված առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար դպրոցում կատարվել են մի շարք աշխատանքներ՝դասալսումներ և դրանց վերլուծություններ, ուսուցիչների օրվա պլանների ստուգումներ, մեթոդական օգնություններ և խորհրդատվություններ ուսուցիչներին: Կատարվել են անհրաժեշտ աշխատանքներ մեթոդմիավորումների հետ: Կազմակերպվել են և տրվել գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից՝ առաջին կիսամյակում՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ դասարաններում/բոլոր առարկաներից/ , երկրորդ կիսամյակում՝ 6-րդ, 7-րդ դասարաններում/հայոց լեզու/գրակ., մաթեմատիկա, բնագիտություն, ռուսաց լեզու, անգլերեն/: Գրավորների արդյունքները լուսաբանվել են մեթոդմիավորման նիստում, քննարկվել են, մշակվել քայլեր՝ առաջադիմության և որակի բարձրացման նպատակով:

Իմ կողմից ուստարվա ընթացքում կատարվել են 75 դասալսումներ, որոնց նպատակն է եղել՝ ստուգել ուսուցչի՝մանկավարժահոգեբանական նպակադրման կարողությունը, ուսումնական մոտիվացիայի ստեղծման և պահպանման կարողությունը, ուսուցչի մեթոդական բազմագիտակությունը, նյութի ըմբռնումը կազմակերպելու կարողությունը, դասի գործնական ուղղվածության ապահովումը, անհատական ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու և շերտավորված ուսուցում իրագործելու կարողությունը, աշակերտակենտրոն ուսուցումը, աշակերտների հետ ուսուցչի հաղորդակցումը, ՏՀՏ-ի կիրառումը, տեսադասեր կազմակերպելու կարողությունը, աշակերտների մոտ գիտելիքների, ուսումնական հմտությունների և կարողությունների ձևավորումը և զարգացումը, նյութի իմացությունը ուսուցչի և աշակերտների կողմից, ուսուցչի մասնագիտական պարտաճանաչությունը, դասի համապատասխանությունը արդի պահանջներին, գիտելիքների գնահատման հիմնավորվածությունը և այլն: Ամեն օր ստուգվել է ուսուցիչների օրվա պլանների առկայությունը: Առանձնապես կարևորվել է դասի արդյունավետության բարձրացումը, ՏՀՏ-ների կիրառումը և տեսադասերի կազմակերպումը, տարաբնույթ

ուսումնական նյութերի կիրառումը ուսումնառական գործընթացի ընթացքում, որոնք ավելի դյուրամարս և հետաքրքիր են դարձնում գիտելիքների յուրացումը: Տարրական դասարանների տարեկան առաջադիմությունը կազմում է 100%, իսկ որակի % -ը կազմում է 67:

5-9-րդ դասարաններում առաջադիմությունը կազմում է 100 %, իսկ որակի %-ը 43.9 է: Ամբողջ դպրոցի առաջադիմությունը 100% է, իսկ որակի %-ը 53 է:



Դասարանների ցածր որակը դիտարկվել և քննարկվել է,թե դասղեկների,թե դասավանդող ուսուցիչների հետ:Որոշվել է ակտիվ համագործակցել ծնողների հետ և քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ բարելավելու ուսումնառության որակը:

8-րդ <<բ>> դասարանի աշակերտուհի Սյուզաննա Մուրադյանը, 5-րդ <<բ>>դասարանի աշակերտ Արսեն Մուրադյանը 120-ից 200 ժամ բացակայելու պատճառով մայիսի 18-ից 25-ն ընկած ժամանակահատվածում հանձնել են քննություններ մայրենիից հայոց լեզու և գրականությունից, մաթեմատիկայից, հանրահաշիվ և երկրաչափություն առարկաներից, ստուգարք ֆիզկուլտուրայից և ստուգողական աշխատանքներ բոլոր առարկաներից՝ սահմանված կարգով: Կազմվել է այդ աշխատանքների ամբողջական փաթեթը, որը ներառում է քննական ու ստուգողական աշխատանքները, և կազմվել են համապատասխան արձանագրությունները: Կատարվել են գրառումներ՝ էլեկտրոնային մատյանի համապատասխան էջերում: Բժշկական տեղեկանքի հիման վրա ֆիզկուլտուրայի քննություններից ազատվել են Արսեն Ասլանյանը, Արտյոմ Եգանյանը, Գագիկ Հակոբյանը: Սերգո Սուքիասյանը, որպես ԿԱՊԿՈՒ աշակերտ, ծնողի դիմումի համաձայն, ազատվել է ավարտական բոլոր քննություններից: 4 -րդ <<բ>> դասարանի աշակերտ Նարեկ Բարոյանը չի ներկայացել <<Մայրենի>> առարկայի գիտելիքների ստուգմանը, ուստի սահմանված կարգով հանձնելու վերաքննություն:

Դպրոցում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 27 աշակերտներ, որոնցից 2-ը ծանր, 16-ը միջին, իսկ 9-ը թեթև խանգարումներով: Նրանց համար կազմվել է ԱՈՒՊ և դասապրոցեսը կազմակերպվել սահմանված նպատակներին համապատասխան: Ուսուցիչները հիմնականում կարողացել են հասնել ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին:



<u>4.Դպրոցի փոխտնօրենների հետ համատեղ իրականացվել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը</u>, ապահովվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի և տարածքային կառավարման

մարմնի՝Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը:

5.Ղեկավարվել է առարկայական մեթոդմիավորումների աշխատանքները: Կարևորվել է ՏՀՏ գործիքների կիրառմամբ դասերի լայն կիրառումը դպրոցում տարբեր առարկաների դասավանդման ժամանակ: Բազմաթիվ տեսադասեր և շնորհանդեսներով միջոցառումներ են անցկացվել գրեթե բոլոր առարկաներից: Հետաքրքիր առարկայական միջոցառումներ են կազմակերպել բոլոր ուսուցիչները՝ համաձայն մեթոդմիավորումների կազմած ծրագրերի՝ պահպանելով նշված ժամկետնեևը: Ընդհանրացվել և տարածվել է մանկավարժական աշխատանքի առաջավոր և արդյունավետ փորձը, կազմակերպվել են բազմաթիվ և բազմաբնույթ բաց դասեր՝դպրոցի մանկավարժական առաջավոր փորձը տարածելու, տարբեր առարկաների նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը մեծացնելու , առարկաների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակներով: Անց են կացվել թվով 28 բաց դասեր:

N	առարկա	Դասարան	թեմա	ուսուցիչ
1	մայրենի	2 Ա	Ոսկեծամիկ աշուն թեմայի ամփոփում	Դ. Մովսեսյան
2	մայրենի	1 Ա	Ամ Հնչյուն-տառի շնորհանդես	Լ. Խուբլարյան
3	մայրենի	1 Ա	Ամ Հնչյուն-տառի շնորհանդես	Շ. Քալաշյան
4	գրականություն	8Ա	Պ. Դուրյանի կենսագրությունը	Ս. Մելիքսեթյան
5	ռուսաց լ	6 Ա Բ		Լ. Հարությունյան Գ. Սուքիասյան
6	երկրաչափություն	8 Ա	Բազմանկյուններ	Ն. Գագինյան

			ի ամփոփում	
7	անգլերեն	4 Ա	Երեք խոզուկներ	Ա. Ճշմարիտյան
8	կենսաբանություն	9 Ա	ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգայինօր	Ս. Նազարյան
9	գրականություն	8 Բ	Շիրվանզադե Արտիստը	Մ. Ջանջուղազյան
10	հասարակագիտություն	9-րդ	Դաս-մրցույթ՝ Մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված	Մ. Նավասարդյան
11	մայրենի	4-րդ Ա	հեքիաթներ	Ս. Մեսրոպյան
12	ազգային երգ ու պար	5-րդ Ա	Թամզարա	Լ. Առուշանյան
13	հայոց պատմ.	6-րդ Ա	Տիգրան Բ Մեծ	Կ. Պողոսյան
14	մայրենի	2-րդ Ա	Հովհ. Թումանիանի հեքիաթները	Դ. Մովսեսյան
15	մայրենի	4-րդ Բ	Թող ուրիշն անի	Կ. Պետրոսյան
16	մայրենի	2-րդ Բ	Երկնքից երեք խնձոր ընկավ	Լ. Իսպիրյան
17	անգլերեն	5-րդ Ա	The monster shopping Trip	Ա. Ճշմարիտյան
18	հայոց պատմություն	8-րդ Ա	Մեծ եղեռն	Կ. Պողոսյան
19	մաթեմատիկա	3-րդ Բ	Կապը ժամանակի չափման միավորների միջև	Հ. Նազարյան
20	ֆիզիկա	7-րդ Բ	Խնդիրների լուծում և փորձեր	Կ. Սիմոնյան
21	դասղեկական բաց դաս	5-րդ Ա	Մինի այգի ծրագրի թեմայով	Կ. Պողոսյան
22	կենսաբանություն	9-րդ Ա	Թեմայի ամփոփում: Ջրոլորտ, մթնոլորտ,	Ս. Նազարյան

			քարոլորտ	
23	դասղեկական բաց դաս	5-րդ Բ	Մինի այգի ծրագրին նվիրված	Մ. Վիրաբյան
24	դասղեկական բաց դաս	2րդ Ա	Երեք խոզուկների այգին	Դ. Մովսեսյան
25	դաս-մրցույթ	6-րդ Ա	Վիկտորինա	Լ. Հունանյան
26	դասղեկական բաց դաս		Մասնագիտություններ	Ա. Սուքիասյան
27	անգլերեն	7-րդ Բ	The Famous Presidents of the USA A. Lincoln	Ա. Ճշմարիտյան
28	դասղեկական բաց դաս	7-րդ Ա	Մինի այգի ծրագիր	Գ. Նազարյան

Իրականացվել են ամենամսյա դասղեկական խորհրդակցություններ,վեր են հանվել ուժեղ և թույլ կողմերը,կատարվել են ընթացիք գնահատումներ դասարանների վարման հետ կապված,մշակվել ծրագրեր և պլաններ էլ ավելի կատարելագործելու և սահուն դարձնելու ծնող-աշակերտ-ուսուցիչ կապը:Կազմակերպվել են թվով 29 համադպրոցական և դասարանային միջոցառումներ:Մասնակցել են թվով 26 ծրագրերի և մրցույթների՝ ապահովելով հաղթանակներ:

Կամավոր ատեստավորման է մասնակցել ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ Ա.Խաժակյանը,սակայն ունեցել է 69 տոկոս արդյունք,23-24 ուստարում կամավոր ատեստավորման կդիմեն 5 ուսուցիչ.

Կենսաբանություն,հայոց լեզու,անգլերեն,ռուսերեն և ՆԶՊ դասավանդող ուսուցիչները:

6.Ուսումնադաստիարակչական աշխատանքների վերահսկողություն: Հսկողություն է իրականացվել ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգվել է

սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, դպրոցականների առարկայական օլիմպիադայի կազմակերպման աշխատանքները և ապահովվել դրանց լուսաբանումը: Մեթոդական օգնություն է ցուցաբերվել ուսուցիչներին և՛ դասապրոցեսի, և՛ առարկայական միջոցառումների կազմակերպման ընթացքում, վերահսկվել է մատենավարությունը:

Կազմակերպվել և անց են կացվել տարեվերջյան ավարտական քննություններն ու գիտելիքների ստուգումները: Կազմվել են դրանց անցկացման ժամանակացույցը և խորհրդատվությունների ժամանակացույցը: <<Ազգային երգ ու պար ակադեմիայի>>հիմնադրամին պարբերաբար դիմել ենք մասնագետի լիցենզավորման կամ տրամադրման համար,սակայն ոչ մի արձագանք չի եղել ,դասերը պարապել է ԵՊՀ –ի Պարարվեստի մանկավարժությունն ավարտած մանկավարժ:

Տոկոսային առարկայական վերլուծության արդյունքում հատուկ նշվել է որ առարկան,որ դասարանում է որակը 50%ից ցածր և տվյալ ուսուցիչներին հանձնարարվել է կատարել լրացուցիչ աշխատանքներ,տրվել են ամառային առաջադրանքներ:

<u>7.Դպրոցի աջակցման խմբի աշխատանքների վերահսկում:</u>

Վերահսկվել է բազմամասնագիտական թիմի աշխատանքը, կարևորվել է ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումնառությունը, անհատական ուսումնական պլանների կազմումը և վարումը: Յուրաքանչյուր եռամսյակից հետո կազմվել են աշխատանքների հաշվետվություններ, որոնց մեջ արտացոլված են կատարված աշխատանքները: Կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ: Շատ կարևոր է մանկավարժական աջակցության թիմի և դասավանդող ուսուցիչների համագործակցությունը առավելապես նոր ուսումնական տարում, քանի որ սեպտեմբերից գործում է ԱՈՒՊ _ների լրացման նոր ձևը:

<u>8.Նախակրթարանի աշխատանքների վերահսկում.</u>

Պարբերաբար վերահսկվել են նախակրթարանի աշխատանքները, կատարվել են դասալսումներ:Նախակրթարան հաճախող երեխաների առաջընթացը ուստարվա ընթացքում ակնհայտ է: 2022-2023 ուստարում նախակրթարանում ունեցել ենք թվով 23 սաներ: Նախակրթարանի աշխատանքները արդյունավետ, տարաբնույթ են եղել:

Անգնահատելի է դպրոցի և մանկավարժների աշխատանքը. անհրաժեշտ է մշտապես առաջնորդվել այն գաղափարով, որ պետության հենասյունը կրթված, դաստիարակված, բարեխիղճ, հայրենասեր քաղաքացիներն են: Որքան շատ ունենանք այդպիսի աշակերտներ, այնքան շատ կմոտենանք բոլորիս՝ հզոր ու անկախ Հայաստան ունենալու երազանքին:

9.Դպրոցի ճաշարանը ունի գերազանց սանիտարահիգենիկ պայմաններ,երեխաներին տրվում է անվճար տաք սնունդ :Ծնողխորհուրդն ակտիվ համագործակցում է՝հետևողական են և աջակցող:

Վերանորոգվել են բոլոր դասասենյակները,գրադարանը և բնապահպանական սենյակը:Սանհանգույցները գտնվում են խիստ անբարեկարգ վիճակում,սակայն մաքրությունը մշտապես ապահովված է:

Դպրոցի հովանավոր Դայանա Բարսամի աջակցությամբ վերանորոգվել և բարեկարգվել է մարզադահլիճի տանիքը:

ԷյԹիՓիի հետ համագործակցության արդյունքում,բնապահպանական դասասենյակի համար ձեռք է բերվել,պրոյեկտոր,գրապահարան և 10 աթոռ,20 աթոռ գնել ենք դպրոցի միջոցներով:

Գրադարարանի հատակը լամինապատվել է և գնվել է ,հանդիսությունների դիտման նպատակով, 60 աթոռ:

Արդեն 3-րդ տարին է դպրոցը մասնակցում է <<Մինի այգի>>մրցույթին՝ձեռք բերելով տարբեր մրցանակներ□

Չորանոց,սառցարան:Աշխատանքների իրականացման արդյունքում անցած տարի դրամաշնորհով կառուցվեց ջերմատուն,որը ուսանելի միջավայր է գործնական աշխատանքներ իրականացնելու համար:Սերմերի ձեռքբերմանն ու ընթացիկ աշխատանքներին աջակցում են ծնողներն ու դպրոցի աշխատակիցները:

Մշտապես տնտեսվարի ուշադրության կենտրոնում է սանիտարահիգենիկ նորմերի պահպանումը,անընդհատ վերանորոգվում է դպրոցի հին գույքը,բարեկարգվում է շենքային խնդիրները:

Եզրակացություն

2022-2023 ուստարվա դպրոցի ուսումնադաստիարակչական ,տնտեսական կազմակերպչական աշխատանքները կատարվել են հավուր պատշաճի, բարեխղճորեն, հետևողական: Խրախուսվել են դրական, ուժեղ կողմերը, իսկ բարելավման կարիք ունեցող կողմերը ժամանակին դիտարկվել են և դրանց համապատասխան լուծումներ տրվել : Կարևորվել է առաջավոր փորձի տարածումը, համագործակցային աշխատանքը, փոխօգնությունը: